1. ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1.1. «ԴԱԲԼ ԴՐԱՅՎ» գովազդային վիճակախաղը կազմակերպվում է «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գովազդային քաղաքականության շրջանակներում՝ Ընկերության Telcell Wallet հավելվածով մատուցվող ծառայությունները գովազդելու նպատակով:

1.2. «ԴԱԲԼ ԴՐԱՅՎ» գովազդային վիճակախաղի (այսուհետ՝ նաև Վիճակախաղ) կանոնները սահմանող սույն փաստաթուղթը (այսուհետ՝ Կանոններ) հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի և 453-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ:

1.3. Օֆերտայի գործողության ժամկետը համընկնում է գովազդային վիճակախաղի անցկացման ժամկետին: Կանոնները կարգավորվում և մեկնաբանվում են, ինչպես նաև Կանոններից բխող բոլոր հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

1.4. Գովազդային վիճակախաղին կարող են մասնակցել ֆիզիկական անձինք, ովքեր Կանոնների 3.3 կետին համապատասխան ընդունել են օֆերտան:

2. Հիմնական հասկացություններ

2.1. **Telcell Wallet հավելված (այսուհետ՝ TW հավելված)՝** էլեկտրոնային փողով վճարումների ընդունման, դրամական փոխանցումների և առցանց այլ գործարքների կատարման համար Ընկերության թողարկած բջջային հավելված:

2.2. **Մասնակից՝** ցանկացած անձ, ով մասնակցում է «ԴԱԲԼ ԴՐԱՅՎ» գովազդային վիճակախաղին:

2.3. **Մասնակցության եզակի համար՝** չկրկնվող 6-անիշ (վեցանիշ) համար, որը Մասնակիցը ստանում է խաղարկությանը մասնակցելու համար:

2.4. **Մասնակցությունը հավաստող նշան (այսուհետ՝ Նշան)՝** հատուկ նշան Telcell Wallet-ում, որը մասնակիցը ստանում է՝ կատարելով Կանոնների 3.1 կետում նշված գործողությունները: Նշանի միջոցով Մասնակիցն իրավասու է ցանկացած պահի տեսնել խաղարկությանը մասնակցության իր եզակի համարը:

3. «ԴԱԲԼ ԴՐԱՅՎ» գովազդային վիճակախաղին մասնակցության և վիճակախաղի անցկացման կարգը

3.1. «ԴԱԲԼ ԴՐԱՅՎ» գովազդային վիճակախաղին (դրա շրջանակներում մասնակիցների միջև անցակցվելիք՝ շահողին որոշելու խաղարկությանը) մասնակցելու հնարավորություն ստանում է այն անձը, ով իր Telcell Wallet-ի միջոցով առնվազն մեկ անգամ համալրել է բուքմեյքերական ցանկացած խաղային հաշիվ և բուքմեյքերական ցանկացած խաղային հաշվին փոխանցված շահումը առնվազն մեկ անգամ ստացել է իր Telcell Wallet բջջային հավելվածի միջոցով:

3.2. Կանոնների 3.1. կետով նախատեսված գործողությունները կատարելուց հետո Մասնակիցն իր Telcell Wallet բջջային հավելվածում անմիջապես ստանում է (արտացոլվում է) Նշան և վիճակախաղին մասնակցելու իրավասություն:

3.3. Կանոնների 3.1 կետում նախատեսված գործողությունները կատարելը համարվում է օֆերտայի լիարժեք և անվերապահ ընդունում (ակցեպտ):

3.4. «ԴԱԲԼ ԴՐԱՅՎ» գովազդային վիճակախաղի շրջանակներում անցկացվելու է մեկ վիճակահանություն: Վիճակահանությունն անցկացվելու է ուղիղ հեռարձակմամբ: Ընկերությունը վիճակահանության անցկացման օրվա, ժամի և վայրի վերաբերյալ Մասնակիցներին տեղեկացնում է նախապես՝ առնվազն 3 աշխատանքային օր առաջ ծանուցման միջոցով:

3.5. Վիճակահանության շրջանակներում խաղարկվելու է հետևյալ վավերապայմաններով մեկ ավտոմեքենա. մակնիշ՝ Toyota, մոդել՝ RAV 4, արտադրության տարեթիվ՝ 2021թ.:

3.6. Վիճակահանությունն իրականացվելու է՝ ավտոմեքենայի խաղարկության հաղթող 6-անիշ համարի յուրաքանչյուր թիվը պատահականության սկզբունքով հետևյալ կերպ որոշելու միջոցով: 0-ից մինչև 9-ը (ներառյալ) թվերով նշագրված խաղաքարերը տեղադրվում են 6 պարկերում, արկղերում կամ այլ տարաներում: Պատահականության սկզբունքով պարկերից, արկղերից կամ այլ տարաներից դուրս են բերվում 1-ական (մեկական) խաղաքարեր, որոնց վրա նշագրված թվերով որոշվում է խաղարկության հաղթող համարը: Ընդ որում՝ առաջին դուրս բերված թիվը համարվում է հաղթող 6-անիշ համարի թվերից առաջինը և այդպես շարունակ՝ մինչև հաղթող համարի վերջին թիվը: Նախքան վիճակահանությունը դուրս են բերվում այն խաղաքարերը, որոնց վրա նշագրված թիվը չի կարող որոշել վիճակահանությանը մասնակցող համարների հերթական համապատասխան թիվը:

3.7. Հաղթող է ճանաչվում այն Մասնակիցը, ում պատկանում է Կանոնների 3.6 կետով սահմանված կարգով պատահականության սկզբունքով որոշված 6-անիշ համարը:

3.8. Հայտարարված շահումի գույնը, ձևը, տեսքը, որակը կարող են տարբերվել (չհամընկնել) Ընկերության հայտարարած շահումի, ինչպես նաև հաղթողների

ակնկալիքներից: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում հայտարարված և փաստացի տրամադրված շահումների անհամապատասխանությունների համար:

3.9. Ընկերությունը կարող է հաղթող Մասնակցի հեռախոսահամարին զանգահարելով և/կամ կարճ հաղորդագրություն ուղարկելով տեղեկացնել, որ վերջինիս պատկանող Մասնակցության համարը մասնակցել է վիճակահանությանը և շահել: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում հաղթողի հեռախոսահամարին զանգը և/կամ կարճ հաղորդագրությունը չհասնելու արդյունքում հաղթողի կողմից շահումը չստանալու համար:

3.10. Ընկերությունը շահումը տրամադրում է վիճակահանությունից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաղթող Մասնակցի անձամբ ներկայանալու, անձը հաստատող վավեր փաստաթուղթ ներկայացնելու և Telcell Wallet-ում ստացած Նշանի դաշտում նշված համարը ներկայացնելու դեպքում, համապատասխան փաստաթղթեր (այդ թվում՝ շահումը ստանալու, շահումը և շահողին տեսա-ձայնա-լուսանկարահանելու և արդյունքը հավաքագրելու, պահպանելու և տարածելու՝ գովազդային, այդ թվում՝ օրինական այլ նպատակներով, իր համաձայնությունը) ստորագրելուց և շահումը պահանջելուց հետո:

3.11. Կանոնների 3.10 կետով նախատեսված գործողությունները վիճակահանությունից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում հաղթող Մասնակցի չկատարելու դեպքում Ընկերությունը կարող է Վիճակահանության արդյունքները համարել չկայացած և չտրամադրել համապատասխան շահումը: Չտրամադրված շահումները մնում են Ընկերության հայեցողության ներքո:

4. Այլ պայմաններ

4.1. Ընկերությունն իրավունք ունի միակողմանի իր հայեցողությամբ իրականացնել սույն Կանոնների ցանկացած պայմանի ցանկացած փոփոխություն, որի մասին տեղեկացնում է իր www.telcell.am կայքում և(կամ) Telcell Wallet բջջային հավելվածում:

4.2. «ԴԱԲԼ ԴՐԱՅՎ» գովազդային վիճակախաղի Մասնակիցը սույնով տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Ընկերությունն իրավունք ունի մարքեթինգային և օրինական այլ նպատակներով օգտագործել Մասնակցի կամ այլ անձանց տվյալները, որոնք Մասնակիցը մուտքագրել է: Մասնակիցը հավաստում և երաշխավորում է, որ իր մուտքագրած տվյալները ինքը և երրորդ անձինք տրամադրել են իրենց կամքով, և երրորդ անձինք ծանոթացել են սույն Կանոնների պայմաններին: Ընկերությունն իրավունք ունի Մասնակցին տեսա-ձայնա-լուսանկարահանել և արդյունքը հավաքագրել, պահպանել ու տարածել գովազդային և օրինական այլ նպատակներով:

4.3. Ընկերությունն իրավունք ունի Մասնակցին և նրա մուտքագրած տեղեկատվությամբ ներկայացված այլ անձանց ուղարկել տեղեկատվական և գովազդային հաղորդագրություններ՝ թե՛ նշված էլեկտրոնային փոստի հասցեով, թե՛ նշված հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով: Սույնով Մասնակիցը տալիս է նմանատիպ հաղորդագրություններ ստանալու համաձայնություն, ինչպես նաև երաշխավորում է, որ այն անձինք, որոնց մասին տեղեկատվությունն ինքը մուտքագրել է, նույնպես տվել են հաղորդագրությունները ստանալու համաձայնություն:

4.4. Ընկերությունն իրավունք ունի իրականացնել թե՛ Մասնակցի, թե՛ նրա նշած այլ անձանց տվյալների ստուգում՝ Ընկերության չափանիշներով: Բացի այդ, Ընկերությունն իրավունք ունի Մասնակցից պահանջել ներկայացնել անձը հաստատող, ինչպես նաև Մասնակցին նույնականացնող անհրաժեշտ այլ փաստաթղթեր ու տվյալներ: Նույնականացնող փաստաթղթերի և տվյալների տեսակներն ու ներկայացման ձևերը սահմանում է Ընկերությունը:

4.5. Սույնով Մասնակիցը համաձայնում է, որ TW հավելվածում առկա հեռախոսահամարը սխալ, գոյություն չունեցող, չաշխատող, այլ անձի կամ խնդրահարույց այլ հետևանքներ առաջացնող լինելու դեպքում Ընկերությունը պատասխանատու չէ անբարենպաստ որևէ հետևանքի, այդ թվում նաև շահումը չտրամադրելու կամ այլ անձի տրամադրելու համար:

4.6. Ընկերության աշխատակիցները ու նրանց ընտանիքի անդամներն իրավունք չունեն «ԴԱԲԼ ԴՐԱՅՎ» գովազդային վիճակախաղի շրջանակներում շահող ճանաչվել և ստանալ շահում:

4.7. Ընկերությունը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում այն տեղեկատվության համար, որը Մասնակիցը մուտքագրում է, ինչպես նաև այն գործողությունների համար, որոնք իրականացվում են այդ տեղեկատվության հիման վրա: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում համապատասխան համակարգերի, ինչպես նաև օգտագործվող կայքի, սոցիալական ցանցերի աշխատունակության համար և չի երաշխավորում դրանց անխափան աշխատանքը:

5. Ընկերության վավերապայմանները

Անվանում՝	«ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն
Հասցե՝	ՀՀ, ք. Երևան 0033, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք, 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
Հարկային հաշվառում՝	ՀՎՀՀ 02703102
Վեբ-կայք՝	www.telcell.am
Էլ.հասցե՝	info@telcell.am
Հեռախոս՝	+374 (60) 27-22-25